

ԳԱՅ ԳՅՈՒՂԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՑՈՒՑԱԴՐՎԵՑԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մեկ փարի առաջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արմավիրի թեմի Գայ գյուղի Ս. Նշան ծխական համայնքի հոգևոր հովիվ Ս. Գևորգ քահանա Կրտիկաշյանի և երեցկնոջ նախաձեռնությամբ և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Մեղանի հովանավորությամբ Գայ գյուղում հիմնվեց մշակութային կենտրոն դպրոցահասակ երեխաների համար:

Նույնի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բացված ցուցահանդեսը մեկամյա կենտրոնի գործունեության յուրօրինակ հաշվետվությունն էր: Ներկայացված էին կենտրոնի ասեղնագործության և նկարչության խմբակների սաների աշխատանքները՝ ավերարանական թեմաներով արված 25 ջրանկար և Թորոս Ռոսլինի մանրանկարներով՝ 15 ասեղնագործ աշխատանքներ:

Ցուցահանդեսի բացումը կապարեց Արմավիրի թեմի առաջնորդ Ս. Միոն եպս. Աղամյանը: Ներկաները բարձր գնահատեցին երեխաների աշխատանքը և մշակութային կենտրոնի գործունեությունը:

Բացի վերը նշված խմբակներից՝ կենտրոնում գործում է նաև թատերական խմբակ և դպրոց դաս: Վերջինիս անդամները, շուրջ 15 աղջնակներ, ամեն կիրակի գյուղի եկեղեցում երգում են Ս. Պապարագի դպրոց բաժինը:

«Գոհ են և՛ երեխաները, և՛ ծնողները, և՛ մենք: Կենտրոնը գյուղական այս բնակավայրում երեխաներին արվեստի հեթ շփվելու հնարավորություն է ստեղծում և միաժամանակ այս ճանապարհով մոտեցնում նրանց Եկեղեցուն», - ասաց կենտրոնի պատասխանատու, երեցկին Հասմիկ Մխիթարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ